2011 թ-ի հուլիսի 18- ին տեղի ունեցավ Արմավիրի մարզի Կողբավան համայնքի կիսամյակային հաշվետու ժողովը: Ժողովին մասնակցում էին համայնքի ղեկավար Հ.Քոչարյանը, Արմավիրի մարզպետարանի [illegible] Կողբավան համայնքի ավագանու անդամները, գյուղապետարանի աշխատակազմի անդամները, համայնքի բնակիչները:

Ժողովում կիսամյակային հաշվետու զեկույցով ելույթ ունեցավ համայնքի ղեկավար Հ. Քոչարյանը :

Արմավիրի մարզի Կողբավան համայնքում
01.01.2011 - 01.07.2011թթ.
ընկած ժամանակահատվածում կատարված
աշխատանքների

Հաշվետվություն

01.07.2011 թ. դրությամբ. նախ կներկայացնեմ տվյալներ 2011թ. բյուջեի կիսամյակային պլանների կատարողականի վերաբերյալ.

1. Հողի հարկ կիսամյակային պլանով հողի հարկի գանձուները նախատեսել էինք 1386.0 հազ. դրամ:Այսօրվա դրությամբ գանձել ենք 1330.0 հազ դրամ, որը կազմում է պլանային ցուցանիշի 96 % - ը : Վստահեցնում եմ մինչև տարեվերջ հողի հարկի գանձումները կհասցնենք 100 %:
2. Գույքահարկի գանձումները կազմում են պլանային ցուցանիշի 28.6 %: Տարվա 2- րդ կեսին այս հարկատեսակի գանձումները ևս կկատարենք 100 %:
3. Վարձակալությամբ տրվող հողերի վարձավճարները կիսամյակային պլանով նախատեսված 1100.0 հազ. դրամի փոխարեն գանձվել է 742.6 հազ. դրամ, որը կազմում է 67.5 % - ը:

Այս մասով գանձումների ցածր տոկոսը պայմանավորված է նրանով, որ խոշոր վարձակալների մեծ մասը բնակվում է մարզի սահմաններից դուս՝ Երևան քաղաքում և հանրապետության մյուս բնակավայրերում:

Այս մասով ես վստահեցնում եմ որ մինչև տարեվերջ գանձումները կկատարենք 100%- ով: Ընթացիկ տարվա աշխատավարձի պարտք չունենք , աշխատավարձը վճարվել է ժամանակին: Համայնքում պարբերաբար կատարվում է աղբահանություն, վերանորոգվել է ոռոգման վնասված ջրագծերը, վերանորոգվել է նաև գյուղացիներին խմելու ջրով ապահովող ցիստեռն ավտոմեքենան:

Գարնանացանը կատարելու համար, համագործակցելով մարզպետարանի հետ, գյուղացիներին տրամադրելով եգիպտացորենի և գարու էլիտար սերմեր:

Կարկտահարությունից և պտտահողմից տուժված հողատերերին բաժանվել է, գյուղ նախարարության կողմից հատկացված դիզելային վառելանյութ և սերմնացուներ:

«Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի շրջանակներում համայն - քում կատարվում է 4.2 կմ 3 - րդ կարգի ներտնտեսային ոռոգման ցանցի կապիտալ վերենորոգման աշխատանքներ, որը կավարտվի սույն թվականի օգոստոս ամսվա վերջում:

Համայնքում առկա հիմնախնդիրներից կառանձնացնեի երկուսը՝

1. համայնքի գազաֆիկացումը
2. խմելու ջրի հարցը

Խմելու ջրի հարցը գյուղապետարանը լուծում է ցիստեռն ավտոմեքենայով համայնքի բնակիչներին անվճար խմելու ջուր մատա - կարարելով:

Կողբավան համայնքի ղեկավար Հ.Քոչարյանի կիսամյակային հաշվետու զեկույցը լսելուց հետո կատարված աշխատանքները գնահատվեց բավարար :

Կողբավան համայնքի ղեկավար Հ.Քոչարյան

18 հուլիսի 2011թ.